# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016 17:15

***Շիրակի մարզի հարգելի՝ փաստաբաններ,***

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հետ համատեղ **Շիրակի մարզի փաստաբանների համար** կազմակերպում է վերապատրաստման դասընթաց՝ ***«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա» թեմայով***, որը տեղի կունենա **2016թ. սեպտեմբերի 10-ին (շաբաթ օր)**, ժամը 10:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում՝ **Berlin Art հյուրանոցի դահլիճում** (հասցե՝ *Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի պող., 25 շենք*):

Վերապատրաստման դասընթացը վարելու են **Մյունխենից հրավիրված փորձագետ՝ փաստաբան, դոկտոր Թոմաս Նափերթը**, ինչպես նաև **տեղացի փորձագետ՝ փաստաբան Տիգրան Սաֆարյանը**: Դասընթացին ապահովվելու է գերմաներեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն:

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) **ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.08.2016թ. թիվ 18/14-Ա որոշմամբ** հավատարմագրվել է որպես փաստաբանների վերապատրաստում իրականացնող կազմակերպություն:

**Նշված դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:**

***Դասընթացին կարող են մասնակցել ոչ ավել, քան 25 (քսանհինգ) փաստաբան: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել*** *ani.gharibyan@advocates.am* ***էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:***

***Բեռնել դասընթացի օրակարգը***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Միջազգային իրավական համագործակցության
գերմանական հիմնադրամի (IRZ)
հայաստանյան ծրագրերի գրասենյակ

## Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ



09.10.2013ԱՎԱՐՏՎԵՑ «ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ

03.12.2013ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ

ԴԱՏԸՆԹԱՑՆԵՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ

**13.01.2014**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })